REPUBLIC OF ARMENIA
Ministry of Territorial Administration and Infrastructure
Closed Joint - Stock Company
"Armenian scientific – Research Institute for Nuclear Power Plant operation"
"ARMATOM"

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Министерство территориального управления и инфраструктур
Закрытое акционерное общество
"Армянский научно-исследовательский институт по эксплуатации атомных электростанций"
«АРМАТОМ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
«Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ»
Փակ բաժնետիրական ընկերություն
«ՀԱՅԱՏՈՄ»

06.12.2023թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի № 2436-Ա առ 16.11.2023թ. հրամանի, ս.թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 01-ը ներառյալ, գործուղվել եմ ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն)՝ մասնակցելու Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կողմից կազմակերպված «Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի անվտանգության համակարգի (ԱԷԿ) ղեկավար կոմիտեի (Կազմկոմիտեի) (այսուհետ EuCAS) 11-րդ նիստի աշխատանքներին: Նիստին մասնակցում էին Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 24 երկրներից (որոնցից 16-ը առկա, 8-ը հեռավար), ինչպես նաև ԱՄՆ-ից:

Մեր հարևաններից մասնակցում էին Ադրբեջանից 2 մասնակից և Վրաստանից 1 մասնակից: Նիստն անցկացվում էր առկա և առցանց մեթոդով:

Համաձայն օրակարգի, քննարկվեց 2023թ. ընթացքում անցկացված սեմինարները և տեխնիկական հանդիպումները, ԱԷՄԳ ներկայացուցչի կողմից կարճ ամփոփվեց և տեղեկատվություն տրամադրվեց կատարված աշխատանքների վերաբերյալ: Ուշադրություն հրավիրվեց անվտանգության ստանդարտներին նվիրված միջոցառման, ԱԷԿ-ներին տեխնիկական և գիտական աջակցություն ցույց տվող կազմակերպությունների դերի և դրանց նշանակության բարձրացմանն ուղղված միջոցառումների վրա:

Քննարկվեց 2024թ. անցկացվելիք միջոցառումների ծրագիրը և ցանկը, որը պայմանականորեն բաժանվեց 4 աշխատանքային խմբերի (WG1, WG2, WG3, WG4): Առաջնային մոտավորությամբ որոշվեց դրանց անցկացման վայրը և ժամանակը: Քանի

որ Հայաստանը EuCAS ղեկավար կազմկոմիտեի նիստի աշխատանքներին մասնակցում էր առաջին անգամ, ուստի ես առաջարկությամբ հանդես եկա, որ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի հետ համաձայնեցնելուց հետո, մենք առաջարկենք, որ մեզ համար կարևորություն ունեցող թեմաներից մեկի հանդիպումն 2025թ. անցկացվի Հայաստանում: Այն գոհունակությամբ ընդունվեց ԱԷՄԳ ներկայացուցիչի և մասնակիցների կողմից:

Հաջորդ EuCAS 12-րդ նիստի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրվի լրացուցիչ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

0004 ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 50/12
г. Ереван, пр. Адмирала Исакова, 50/12
50/12 Admiral Isakov ave., Yerevan

Phone: (37410) 74-21-30
Fax: (37410) 73-46-10
E-mail: armatom@armatom.am